

N 5 Հոկտեմբեր 2010 – Դեկտեմբեր 2010

Բաց հասարակության հիմնադրամները, ակտիվորեն գործելով աշխարհի ավելի քան 70 երկրներում, օժանդակում են արդարադատության ու մարդու իրավունքների, խոսքի ազատության, հանրային առողջապահության և կրթության հասանելիության հարցերում:

Այս համարում՝

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԲՀՀ-Հայաստանը մեկնարկում է հանրային քաղաքականության կրթաթոշակների նախաձեռնությունը
- Ռազմավարական դատավարության ոլորտին աջակցում է Նիդեռլանդների դեսպանատունը Թբիլիսիում
- ԲՀՀ-Հայաստանը մեկնարկում է «Հայկական բանավեճ» ծրագիրը
- ԲՀՀ-Հայաստանն օժանդակում է Թեղուտի հանքավայրի շահագործման էկոլոգիական անվտանգության հարցերի շուրջ միջազգային համաժողովին
- Բնապահպան ակտիվիստները հավաքվում են՝ ձեռք բերելու նոր հմտություններ
- ԲՀՀ-Հայաստանն օժանդակում է նոր հասարակական դիտորդների խմբին
- ԲՀՀ կազմակերպում է փաստաթղթավորման ու նոր տեխնոլոգիաների վերաբերյալ դասընթաց մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների համար
- HURIDOCS-ն ուսուցանում է Հայաստանի ՀԿ-ներին
- Հայ փորձագետները մասնակցում են «Լատվիա. կարողությունների զարգացում արտաքին քաղաքականության ասպարեզում» ծրագրին
- Բարեգործական ցուցահանդես «Արթերիջում»
- ԲՀՀ-Հայաստանի Տնօրենների խորհուրդը հանդիպում է աշխատակազմի և գործընկեր կազմակերպությունների հետ
- Հաշմանդամները նշում են Հաշմանդամների իրավունքների պաշտպանության միամսյակը Գյումրիում

ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

- ԲՀՀ-Հայաստանի օգնությանը հնարավոր է դառնում լուրերի ընթերցումը բջջային հեռախոսներով
- «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ն հրապարակում է առաջարկներ հեռուստառադիոհեռարձակման թվային համակարգին անցնելու գործընթացի վերաբերյալ և ներկայացնում ՉԼՄ-ների ազատության մասին զեկույցը

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Մասնագետները քննարկում են պալիատիվ խնամքի հրատապությունը Հայաստանում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- «Կովկասի երեխաները» հրատարակությունը ներկայացվեց Հայաստանում

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՍՏՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Մնունդ Դովեդ գյուղի մանկապարտեզի սաների համար
- Օժանդակություն Գավառի հատուկ դպրոցին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՀՀ-Հայաստանը մեկնարկում է Հանրային քաղաքականության կրթաթոշակների նախաձեռնությունը

2010թ. հոկտեմբերին Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը (ԲՀՀ-Հայաստան) առաջին անգամ սկսեց ընդունել հետազոտական աշխատանքների վերաբերյալ առաջարկներ նոր մեկնարկած Հանրային քաղաքականության կրթաթոշակների նախաձեռնության շրջանակում: Այս նախաձեռնությունը նպատակ ունի հանրային քաղաքականության հարցերով զբաղվող համայնքի անդամներին հնարավորություն ընձեռել հետամուտ լինելու այնպիսի նախագծերի իրականացմանը, որոնք կխթանեն ու կխորացնեն հասարակական բանավեճը երկրի առջև ծառայած կարևորագույն խնդիրների շուրջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքականության հարցերով զբաղվող անկախ հետազոտական կենտրոններ գրեթե չկան, տպավորիչ էր, որ ԲՀՀ-Հայաստանին ներկայացվեցին զգալի թվով հայտեր՝ ինքնատիպ թեմաներով՝ կապված բազմատեսակ խնդիրների քաղաքականությունների հետ: Ներկայացված հայտերի քննարկումից և հարցազրույցներից հետո ընտրվեցին առաջին յոթ հետազոտողները:

Կրթաթոշակները նախ և առաջ նախատեսված են այն անհատների համար, ովքեր նպատակ ունեն իրականացնել անկախ հետազոտություն տարբեր ոլորտների քաղաքականության հիմնարար մարտահրավերների շուրջ, ինչը կօգնի դրանց վերաբերյալ հասարակական գիտակցության հարստացմանը և հնարամիտ լուծումներ գտնելուն: Նոր նախաձեռնությունը նպատակ ունի խորացնել անհատական հետազոտական կարողությունները և քաղաքականության ձևավորման հմտությունները ակադեմիական, գործարար, կառավարական ու լրատվական օղակներում:*

2010 թ.

- Նիդեռլանդների դեսպանությունն աջակցեց Ռազմավարական դատավարության ծրագրին:
- ԲՀՀ-Հայաստանը աջակցեց հատուկ դպրոցների մոնիտորինգով զբաղվող նոր մոնիտորինգային հասարակական խմբին:
- ԲՀՀ-Հայաստանը, Մարդու իրավունքների ու կառավարման դրամաշնորհների ծրագիրը և Բաց հասարակության տեղեկատվական ծրագիրը աջակցեցին մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություններին տվյալների հավաքման, տնօրինման ու տարածման աշխատանքները բարելավելու հարցում:

Ռազմավարական դատավարության ոլորտին աջակցում է Նիդեռլանդների դեսպանատունը Թբիլիսու

ԲՀՀ-Հայաստանը և Թբիլիսու Նիդեռլանդների դեսպանությունն սկսեցին մի նոր նախագիծ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը և այդ ոլորտում քաղաքականության բարելավմանը՝ ռազմավարական դատավարության միջոցով: Այս նախագիծը լրացնում է ԲՀՀ-Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանության ու ՀԿ-ների կարողությունների զարգացման աշխատանքները և հանդիսանում է այդ հարցերում Թբիլիսու Նիդեռլանդների դեսպանության հետ երկարամյա համագործակցության շարունակությունը: Նախագիծը նպատակ ունի ամրապնդել ՀԿ-ների ու իրավական գործունեություն իրականացնողների կարողությունները մարդու իրավունքների ոլորտում ռազմավարական դատավարության գործածման միջոցով, այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ արդար դատաքննություն, հանրահավաքների ազատություն, ընտանեկան բռնություններ, խոշտանգում, տեղեկատվության ազատություն, առողջության և սոցիալ-տնտեսական իրավունքներ:

2010 թ.

- ԲՀՀ-Հայաստանի Ռազմավարական դատավարության ծրագրի ներքո դիտարկվել են կյանքի, սեփականության, կանանց, արդար դատաքննության հասանելիության և երեխաների իրավունքների հետ կապված 20 գործեր:

ԲՀՀ-Հայաստանի գնահատմամբ ռազմավարական դատավարությունը կարող է նպաստել արդարադատությունը հասանելի դարձնելուն, իրավունքները վերականգնելուն, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական և քաղաքականությանն ուղղված բարելավումներ կատարելուն:

ԲՀՀ-Հայաստանի Ռազմավարական դատավարության ծրագիրը մեկնարկել է 2006թ. իսկ 2008թ.-ից իրականացվում է Հիմնադրամի կողմից՝ աջակցություն ցուցաբերելով տարաբնույթ գործերում: Ներկայում ծրագրի հովանու ներքո գտնվող գործերից 9-ը ներկայացված են ՄԻԵԴ-ի քննությանը, 4-ը՝ ՀՀ սահմանադրական դատարանում են, իսկ մի շարք գործեր էլ գտնվում են տեղական տարբեր ատյանների վարույթում:*

ԲՀՀ-Հայաստանը մեկնարկում է «Հայկական բանավեճ» ծրագիրը

Դեկտեմբերին ԲՀՀ-Հայաստանը և Բաց հասարակության երիտասարդական նախաձեռնությունը մեկնարկեցին «Հայկական բանավեճ» ծրագիրը, որը նպատակ ունի երիտասարդներին ներգրավել լավ հիմնավորված և կշռադատված բանավեճի մեջ այնպիսի հարցերի շուրջ, որոնք կարևոր են իրենց կյանքի և հասարակության համար:

Որպես «Հայկական բանավեճ» ծրագրի մաս դեկտեմբերի 1-3-ը ԲՀՀ-Հայաստանը, Բաց հասարակության երիտասարդական նախաձեռնությունը և Բանավեճի ուսուցման միջազգային ասոցիացիան (IDEA) կազմակերպեցին նե-



Դասընթացի մասնակիցները բանավեճելիս, 1-3 դեկտեմբերի, 2010թ.

րածական դասընթաց, որին մասնակցեցին 18 հոգի՝ ՀԿ-ների, բուհերի, ավագ դպրոցների ներկայացուցիչներ ու շահագրգիռ այլ երիտասարդներ: Հետագայում դասընթացներ կլինեն այն ակտիվ երիտասարդների համար, ովքեր դասընթացում իրենց ձեռք բերած գիտելիքները կկիրառեն թիմերի պատրաստման ու բանավեճային միջոցառումների կազմակերպման համար:

Բանավեճը սովորելու ճկուն միջոց է, որը կարելի է կիրառել դասարաններում, արտադասարանական պարապմունքներում, մրցույթների և մրցաշարերի ժամանակ, ինչը կարող է խթանել և առաջ բերել քննարկումներ կարևոր հարցերի շուրջ՝ հասարակության ավելի լայն շերտերի ներգրավմամբ: «Հայկական բանավեճ» ծրագիրը նպատակ է հետապնդում խթանել բանավեճի կիրառման պրակտիկական դպրոցներում, երիտասարդական ակումբներում, երիտասարդների հետ աշխատող ՀԿ-ներում կամ համայնքային կենտրոններում՝ դրանք ծառայեցնելով որպես բանավեճերի անցկացման հարթակ երիտասարդների համար:*

2010 թ.

- ԲՀՀ-Հայաստանն աջակցեց «Թեղուտ. գավակների հացը» ֆիրմի պատրաստման և ներկայացման աշխատանքներին:
- ԲՀՀ-Հայաստանն աջակցել է մարդու իրավունքների հարցերով զբաղվող 10 ՀԿ-ների՝ իրականացնելու մարդու իրավունքներին առնչվող տարբեր նախագծեր:

ԲՀՀ-Հայաստանն օժանդակում է Թեղուտի հանքավայրի շահագործման էկոլոգիական անվտանգության հարցերի շուրջ միջազգային համաժողովին

2010թ. դեկտեմբերի 14-ին ԲՀՀ-Հայաստանի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ տեղի ունեցավ միջազգային համաժողով՝ «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի էկոլոգիական անվտանգությունը» թեմայով: Համաժողովի համակազմակերպիչներն էին «Թեղուտի պաշտպանության խումբ» հայաստանյան քաղաքացիական նախաձեռնությունը և «Green Alternative» («Կանաչ այլընտրանք») վրաստանյան հասարակական կազմակերպությունը: Համաժողովը նպատակ ուներ քննության առնել հանքավայրի շահագործման վտանգները: Համաժողովի նախօրեին կազմակերպվեց այցելություն Թեղուտ՝ ներկայացնելու այն տարածքները, որոնք կկրեն հանքավայրի շահագործման հետևանքները: Թեղուտ կատարված այցին մասնակցեցին քաղաքացիական հասարակության ու ՉԼՄ-ների ներ-



Հնչում են տնտեսագետի գնահատականները Թեղուտի ծրագրի վերաբերյալ, 14 դեկտեմբերի, 2010թ.

կայացուցիչներ՝ Հայաստանից և Վրաստանից:

Հայ փորձագետների գնահատմամբ հանքավայրի շահագործումը լուրջ բացասական հետևանքներ կունենա շրջակա միջավայրի վրա, հանգեցնելով 1000 հեկտար անտառահատման, աղբյուրների դրենաժի, հողի էրոզիայի, ողջ էկոհամակարգի կործանման՝ վտանգելով կենդանական ու բուսական աշխարհի որոշ տեսակներ: Կմեծանա սողանքների հավանականությունը: Պոչամբարները, որտեղ կկուտակվեն 500 միլիոն տոննա հանքանյութի ու 600 միլիոն տոննա այլ տեսակի թափոններ, կաղտոտեն Շնող գետի ավազանը և կանդրադառնան սննդի անվտանգության ու մարդկանց առողջության վրա: Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի բնապահպանական փորձագետ Սոնա Այվազյանն ավելացնում է. «Թեղուտի հանքավայրի շահագործման մասին որոշումները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և վերջինիս միջազգային պարտավորություններին: Կառավարությունը քայլեր չի ձեռնարկել շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ միջազգային անկողմնակալ գնահատում իրականացնելու ուղղությամբ: Հանքավայրի շահագործման ընթացքում կամ դրանից հետո ինչ-որ մի պահի հնարավոր են անդրսահմանային հետևանքներ: Այդ պարագայում երկիրը և հետագա սերունդները պարտավոր կլինեն փոխհատուցել հարևան պետություններին պատճառված վնասները»:

Բնապահպան ակտիվիստները հավաքվում են ձեռք բերելու նոր հմտություններ

2010թ. հոկտեմբերին ԲՀՀ-Հայաստանը, Բաց հասարակության երիտասարդական նախաձեռնությունը և 350.org-ը կազմակերպեցին Բնապահպանական լիդերների ճամբար՝ համախմբելու նոր և առաջին քայլերը կատարող բնապահպան-առաջնորդներին՝ ցանցային կապերի ձևավորման և համագործակցության, ինչպես նաև բնապահպանական արշավների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ դասընթացի մասնակցելու համար: Ինտերակտիվ այս ճամբարին մասնակցեցին 30 երիտասարդ ակտիվիստներ, ովքեր մշակեցին արշավի ռազմավարություն, ծանոթացան արշավների նոր առցանց և ոչ ցանցա-



Բնապահպանական լիդերների ճամբարում, 5-8 նոյեմբերի, 2010թ.

յին մեթոդներին՝ աշխատելով 350.org կազմակերպության փորձագետ Վիլ Բեյթսի հետ:

350.org-ը միջազգային շարժում-արշավ է, որը նպատակ ունի համախմբել աշխարհը կլիմայի փոփոխությունների հետ կապված լուծումներ գտնելու հարցում, լուծումներ, որ պահանջվում են գիտության և արդարադատության կողմից:

ԲՀՀ-Հայաստանն օժանդակում է նոր հասարակական դիտորդների խմբին

ԲՀՀ-Հայաստանը աջակցություն է ցուցաբերում հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների մշտադիտարկման հասարակական դիտորդական խմբին, որը ձևավորվել է Գիտության և կրթության նախարարի որոշմամբ՝ Նուբարաշենի հատուկ դպրոցում տեղ գտած անառակաբարո գործողությունների ու սեռական ոտնձգությունների աղմկահարույց դեպքերից հետո: Խմբի կազմում ներառված են երեխաների, կրթության և մարդու իրավունքների հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Խորհրդի կանոնադրությունը մշակվել է օրինակի հիման վրա՝ համագործակցելով արդեն իսկ գործող Քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբի հետ՝ խմբին ապահովելու անարգել մուտքի հնարավորություն հատուկ ուսումնական հաստատություններ:

2010 թ.

Միրահարների այգում կազմակերպվեց լուսանկարների ցուցահանդես, որտեղ ներկայացվում էր կյանքը ժամանակավոր տնակներում՝ «դոմիկներում» երկրաշարժից 22 տարի անց:

- «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն ներկայացրեց 2009-2010թթ. Գյումրիում բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգի մասին զեկույցը՝ հասարակության դատին ներկայացնելով բնակարանների բաշխման գործընթացները:

ԲՀՀ կազմակերպում է փաստաթղթավորման ու նոր տեխնոլոգիաների վերաբերյալ դասընթաց մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների համար

2010թ. հոկտեմբերի 18-ին ԲՀՀ-Հայաստանը, ԲՀՀ տեղեկատվական ծրագիրը և Մարդու իրավունքների ու կառավարման դրամաշնորհների ծրագիրը Երևանում կազմակերպեցին մասնագիտական զարգացման դասընթաց՝ փաստաթղթավորման ու նոր տեխնոլոգիաների վերաբերյալ մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների համար: Դասընթացը նպատակ ուներ անդրադառնալ քաղաքացիական հասարակության կազմակերպություններում մարդու իրավունքների հետ կապված խնդիրների փաստաթղթավորման, տվյալների կառավարման և մարդու իրավունքների ու կառավարման ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառման փոխկապակցված հարցերին: Մեմինարի ընթացքում ապացույցներ ձեռք բերելու ու փաստաթղթային հիմքեր ապահովելու, կազմակերպություններում տվյալների կառավարումը գնահատելու, բաց քարտեզագրման գործիքներն օգտագործելու, հասարա-

- «Թուժանյանի հերիաքների օր» խորագրի ներքո անցկացված Հինգերորդ միջազգային տիկնիկային փառատոնին **Լոռու մարզի Դսեղ գյուղում հավաքվել էին ավել քան 2000 երեխաներ:**
- **Երևանում ներկայացվեց ֆոտոլրագրող և վավերագիր-լուսանկարիչ Ռուբեն Մանգասարյանի «Սև կյանք» լուսանկարների ցուցահանդեսը:**

կուրսյանը քրաուդսոսիցի միջոցով ներառելու և շահապաշտպան գործունեության նոր մարտավարություններ կիրառելու թեմաներին անդրադարձ կատարեցին Հյուսիս Ասիայի Կոնգրեսի ներկայացուցիչ Էլիսա Զիլը, HURIDOCS-ի ներկայացուցիչ Քեթրին Մաչալեկը, MySociety-ի ներկայացուցիչ Թոնի Բատլենը, Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնի ներկայացուցիչ Քաթրինը և Open Maps Caucasus-ի ներկայացուցիչ Էրիկ Բարթըրը:»

HURIDOCS-ն ուսուցանում է Հայաստանի մարդու իրավունքների ՀԿ-ներին

ԲՀՀ տեղեկատվական ծրագիրը, Մարդու իրավունքների ու կառավարման դրամաշնորհների ծրագիրը և ԲՀՀ-Հայաստանն օժանդակեցին մարդու իրավունքների շվեյցարական HURIDOCS ՀԿ-ին (թարգմանաբար նշանակում է՝ Մարդու իրավունքների տեղեկատվության և փաստաթղթավորման համակարգեր) հայկական մարդու իրավունքների ՀԿ-ների կարողությունները տվյալների հավաքման, կառավարման, անվտանգության ապահովման ու փոխանցման ասպարեզում բարելավելու նպատակով: HURIDOCS-ը սերտորեն համագործակցելու է «Պետական կարիքների գոհեր» ՀԿ-ի, «Ասպարեզ» լրագրողական ակումբի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և «Մարդու իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» ՀԿ-ի հետ՝ ապահովելու լուծումներ ու կատարելու անհրաժեշտ միջամտություններ ուղղված գործերի վարման, փաստաթղթերի փոխանցման համակարգերի, վեբ կայքերի, շահապաշտպան գործիքների ու մարտավարությունների բարելավմանը:

Նախքան ծրագրի մեկնարկը HURIDOCS-ը կատարել է կարիքների գնահատում յուրաքանչյուր կազմակերպության համար՝ բացահայտելու այն խնդիրները, որ վերջիններս ունեն իրենց ամենօրյա աշխատանքում կապի և տեղեկատվության տեխնոլոգիաների կիրառման ասպարեզում, որպեսզի մշակվեն առկա կարիքներից բխող լուծումներ:»

Հայ փորձագետները մասնակցում են «Լատվիա. կարողությունների զարգացում արտաքին քաղաքականության ասպարեզում» ծրագրին

2010թ. դեկտեմբերին երկու փորձագետ Հայաստանից ուղևորվեցին Լատվիա՝ մասնակցելու «Լատվիա. կարողությունների զարգացում արտաքին քաղաքականության ասպարեզում» ծրագրին: Նախաձեռնության շրջանակում կազմակերպվում էր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Կենտրոնական Ասիայի երկրների փորձագետների այցելությունը Լատվիա՝ մասնակցելու արտաքին քաղաքականության, տնտեսական իրավիճակի, հարևան երկրների հետ տնտեսական կապերի, աշխարհաքաղաքական դրության և միտումների, ինչպես նաև անվտանգության քաղաքականության շուրջ ընթացող քննարկումներին:

Հայ փորձագետները ներկայացրեցին Հայաստանի գործող քաղաքական և տնտեսական համակարգերը, երկրի առաջ ծառայած հիմնական մարտահրավերները և Հայաստանի տեղն ու դերը Հարավային Կովկասի երկրների, Ռուսաստանի և Թուրքիայի հետ հարաբերություններում:

Եռօրյա այցի ընթացքում փորձագետները հանդիպումներ ունեցան Լատվիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում և մի շարք դասախոսություններով հանդես եկան Ռեգայի Ստրադինս համալսարանում:»

ԲՀՀ-Հայաստանի Տնօրենների խորհուրդը հանդիպում է գրասենյակի աշխատակազմի և գործընկեր կազմակերպությունների հետ

Նոյեմբերի 26-27-ին ԲՀՀ-Հայաստանի Տնօրենների խորհուրդը հանդիպում ունեցավ ԲՀՀ-Հայաստանի գրասենյակի աշխատակազմի և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու ընթացքի մեջ գտնվող հիմնական աշխատանքները:

Հանդիպումը բացառիկ հնարավորություն էր, որպեսի Խորհուրդը ծանոթանար գործընկեր կազմակերպությունների կողմից իրենց գործունեության ոլորտների վերաբերյալ գնահատականներին ու դիրքորոշումներին, իսկ այդ կազմակերպությունները ծանոթանային Խորհրդի մտնցումներին ու գնահատականներին:»

Բարեգործական ցուցահանդես «Արթերիջում»

Դեկտեմբերի 1-ին «Արթերիջ» սրճարանում բացվեց «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի իրավունք» խորագրով լուսանկարների բարեգործական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին այն պայմանները, որում ապրում են Գյումրու ժամանակավոր տնակների՝ «դոմիկների» բնակիչները: Ցուցահանդեսը ներկայացնում է երիտասարդ լուսանկարիչ Անուշ Բաբաջանյանի լուսանկարները, որոնք պատրաստվել են ԲՀՀ-Հայաստանի օժանդակությամբ «Երրորդ բնություն» ՀԿ-ի կողմից իրականացված նախագծի շրջանակում: Նախագծի նպատակն էր բարձրաձայնել հազարավոր մարդկանց խնդիրները և իշխանությունների ու այլ շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրել 22 տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժի հետևանքների հետ դեռ մաքառող մարդկանց խնդիրներին:

Ցուցահանդեսը գործեց մինչև դեկտեմբերի 8-ը և հանգանակված միջոցները տրամադրվեցին Գյումրիի դոմիկների բնակիչներին:

Լուսանկարները կարող եք դիտել առցանց՝ այցելելով <http://anushbabajanyan.com/2010/03/19/living-in-gyumri-domiks/> և <http://anushbabajanyan.com/2010/03/22/photoalbum/> էջերը: ▪

Հաշմանդամները նշում են Հաշմանդամների իրավունքների պաշտպանության միամսյակը Գյումրիում

Գեկտեմբերի 3-ին հատուկ կարիքներով կանանց «Ա-գաթ» կենտրոնը նախաձեռնեց խաղաղ երթ՝ նշելու հաշմանդամների իրավունքների պաշտպանությանը նվիրված միամսյակը: Երթը սկսվեց Գյումրիի Անկախության հրապարակից և հասավ մինչև Վարդանանց հրապարակ (Կենտրոնական հրապարակ):

Խաղաղ երթի նպատակն էր ընդլայնել մարդկանց իրազեկվածությունը հաշմանդամների իրավունքների վերաբերյալ: Երթի մասնակիցները կրում էին բազմաթիվ պաստառներ, որոնց կարգախոսները վերաբերում էին հաշմանդամների իրավունքներին ու բոլորի համար հավասար հնարավորությունների ապահովմանը: Երթի վերջում մասնակիցները գունավոր կաշուն քոթերի վրա գրեցին իրենց ցանկությունները, դրանք ամրացրեցին օդապարիկների վրա՝ բաց թողնելով դրանք դեպի երկինք և հուսալով, որ մի օր իրենց ցանկությունները կդառնան իրականություն: ■



Գյումրիում նշվում է Հաշմանդամների իրավունքների պաշտպանության միամսյակը, 3 դեկտեմբերի, 2010թ.

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՉՈՅՆԵՐ

ԲՀՀ-Հայաստանի օգնությամբ հնարավոր է դառնում լուրերի ընթերցումը բջջային հեռախոսներով

Հայաստանում առցանց լրատվամիջոցները դարձել են անկողնակալ տեղեկատվության միակ աղբյուրը: Թեպետ երկրի բնակչության գերակշիռ մասն օգտվում է բջջային հեռախոսներից, ինտերնետի ներթափանցման աստիճանը դեռ ցածր է (7% 2009թ. վերջի դրությամբ՝ ըստ Միջազգային հեռահաղորդակցության կազմակերպության գնահատման): Չնայած առցանց ռեսուրսների հեղինակության մեծացմանն ու բջջային հեռախոսներից օգտվողների թվի անընդհատ ավելացմանը հայկական վեբ կայքերը բջջային հեռախոսներից ընթերցելու հնարավորություն չկար, քանի որ հայերեն լեզուն հեռախոսների օպերացիոն համակարգը չէր ընդունում: Հաշվի առնելով առցանց ռեսուրսների հեղինակության աճը, բջջային հեռախոսներից օգտվողների մեծ թիվը և հեռախոսի միջոցով առցանց լրատվությանը ծանոթանալու պահանջարկը՝ ԲՀՀ-Հայաստանի տեղեկատվական ծրագիրն օժանդակություն ցուցաբերեց տարածված բջջային հեռախոսների համար հայերենի տեղայնացումն ապահովելու հարցում, որի արդյունքում հնարավոր դարձավ ընթերցել առցանց հայալեզու նյութերը: Տեղայնացման փաթեթներ են մշակվել հետևյալ հարթակների համար. Symbian (Nokia S60 platform), Maemo, Android և Windows Mobile:■

ԽԱՊԿ-ը հրապարակում է առաջարկներ հեռուստառադիոհեռարձակման թվային համակարգի անցնելու գործընթացի վերաբերյալ և ներկայացնում ՉԼՄ-ների ազատության մասին զեկույցը

Գեկտեմբերի 21-ին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն (ԽԱՊԿ) հրապարակեց իր աշխատանքային խմբի առաջարկները հեռուստառադիոհեռարձակման անալոգային համակարգից թվային համակարգի անցնելու գործընթացի վերաբերյալ: Փաստաթղթում ներկայացված են առաջարկներ ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքում փոփոխություններ կատարելու, տեխնիկական խնդիրների տրամաբանական լուծումների, ինչպես նաև հասարակությանը որպես թվային հեռարձակման սպառողների նախապատրաստելու վերաբերյալ: Կազմակերպության ներսում աշխատանքային խումբը ձևավորվել է որպես ԲՀՀ-Հայաստանի օժանդակությամբ իրականացվող առավել ընդգրկում ծրագրի մի մաս:

Գեկտեմբերի 13-ին ԽԱՊԿ փորձագետները ներկայացրեցին Հայաստանում ՉԼՄ-ների ազատության մասին ուսումնասիրության արդյունքները, որն իրականացվել էր ԲՀՀ-Հայաստանի օժանդակությամբ: Ուսումնասիրությունն իրականացվել է «Ֆրիդոմ հաուզ» կազմակերպության մեթոդաբանությամբ:■

2010 թ.

- ԲՀՀ-Հայաստանի օժանդակությամբ Հայաստանում հեռարձակում սկսեց առաջին ինտերնետային հեռուստատեսությունը:
- ԽԱՊԿ-ը ԲՀՀ-Հայաստանի օժանդակությամբ անցկացրեց ՉԼՄ-ների ազատության մոնիտորինգ «Ֆրիդոմ հաուզ» կազմակերպության մեթոդաբանությամբ, դիտարկեց կառավարության կայքերի թափանցիկությունը և թվայնացման գործընթացը Հայաստանում:
- ԲՀՀ-Հայաստանն օժանդակություն է ցուցաբերել 5 առցանց լրատվամիջոցների և 2 մարզային հեռուստաընկերությունների, որոնց ընտրությունը կատարվել էր մրցութային հիմունքներով:

Ըստ ուսումնասիրության Հայաստանում ՉԼՄ-ների ազատության մակարդակը դեռ գտնվում է «մասամբ ազատ» վիճակում, սակայն մոտեցել է «ոչ ազատ» լինելու սահմանին: Միջին միավորը կազմում էր 58.64, չնայած «Ֆրիդոմ հաուզին» գնահատմամբ Հայաստանը ստացել էր 66 միավոր՝ տեղ գտնելով «ոչ ազատ» գոտում (ինչքան բարձր է միավորը, այնքան ավելի ցածր է ՉԼՄ-ների ազատության մակարդակը): ԽՍՊԿ նախագահ Աշոտ Մելիքյանը միավորների տարբերությունը բացատրում է հետևյալ կերպ. «7.36 միավորի տարբերությունը ես բացատրում եմ այն հանգամանքով, որ մենք հարցազրույցներ ենք վարել ոչ միայն անկախ փորձագետների, այլ նաև ՉԼՄ-ների ներ-

կայացուցիչների հետ, իսկ նրանց ինքնագնահատականը հաճախ քննադատական չէ»:

Հիշյալ երկու զեկույցներին էլ կարող եք ծանոթանալ՝ այցելելով www.khosq.am կամ www.partnership.am կայքերը:»

2010 թ.

- ԲՀՀ-Հայաստանն օժանդակել է կապի և տեղեկատվական տեխնոլոգիաներին նվիրված «Ինտերակտիվ» հարդրաշարի պատրաստմանը և հեռարձակմանը Հանրային հեռուստատեսության եթերում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մասնագետները քննարկում են պալիատիվ խնամքի հրատապությունը Հայաստանի համար

2010թ. դեկտեմբերի 15-ին ԲՀՀ-Հայաստանը մի հարկի տակ էր հավաքել ՀԿ-ների, պետական պաշտոնյաների, բժիշկների, իրավաբանների՝ մասնակցելու «Պալիատիվ (ցավամոքիչ) խնամքի արշավի քարտեզագրում Հայաստանում» խորագրով աշխատաժողովին և վերհանելու այն ընթացիկ խնդիրները, որ ներկայում Հայաստանում ունեն հիվանդներն ու բժիշկները՝ օփիոիդների բացակայության պատճառով:

Երկրում զարգացած չեն պալիատիվ խնամքի ծառայությունները և չկա հակացավային քաղաքականություն: «Կյանքի վերջին օրերն ապրող հիվանդներին օգնելու անկարողությունը և թողնելը, որ նրանք տառապեն ցավից, անընդունելի է և անմարդկային: Մենք պետք է իրազեկենք ու տեղեկացնենք մարդկանց կյանքի վերջին օրերին իրենց իրավունքների մասին: Անհրաժեշտ է անհապաղ կազմակերպել շահապաշտպան արշավներ՝ ուղղված մահացու հիվանդություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավմանը», - ասում է Հրանտ Կարապետյանը Հակացավային

և պալիատիվ օգնության ասոցիացիայից:

Ներկայումս Հայաստանում կան պալիատիվ/ցավամոքիչ խնամքի կարիք ունեցող 1500-2000 հիվանդներ: Երկրում կտրուկ ավելանում է պալիատիվ խնամքի կարիքը, սակայն օփիոիդների սահմանափակ առկայության հետևանքով բազմաթիվ հիվանդներ իրենց կյանքի վերջին օրերին ստիպված են անհարկի դիմակայել ցավին:»



«Պալիատիվ խնամքի արշավի քարտեզագրում Հայաստանում» քննարկ աշխատաժողովի մասնակիցները, 15 դեկտեմբերի, 2010թ.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«Կովկասի երեխաները» հրատարակության շնորհանդեսը ԲՀՀ-Հայաստանի և ԲՀՀ կրթական աջակցության ծրագրի կողմից

Դեկտեմբերի 13-ին ԲՀՀ կրթական աջակցության ծրագիրը ԲՀՀ-Հայաստանի հետ համատեղ ներկայացրեցին «Կովկասի երեխաները. խոցելի խմբերի երեխաների և ռիսկային խմբերի երեխաների հիտասարդների ինտեգրումը Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Ռուսաստանի Հյուսիսկովկասյան հատվածում»: Հրատարակությունը ներկայացրեց Բաց հասարակության հիմնադրամների կրթական աջակցության ծրագրի ավագ մենեջեր Քեյթ Լեփինը: Միջոցառմանը ներկա էին երեխաների հարցերով զբաղվող տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև պաշտոնյաներ նախարարություններից:

Այս հրատարակությունը կարևոր ռեսուրս է հանրակրթական համակարգում հաշմանդամ երեխաների ինտեգրման

հարցերով զբաղվող կազմակերպությունների և հասարակության լայն շերտերի համար: Այն նաև ներառում է հաջողված փորձի մասին պատմություններ, առաջարկներ քաղաքականության վերաբերյալ, որոնք միտված են հաշմանդամ երեխաների ներառական կրթության քաղաքականության ու դրա գործնական ապահովման աշխատանքների բարելավմանը:»



ԲՀՀ կրթության աջակցության ծրագրի ավագ մենեջեր Քեյթ Լեփինը ներկայացնում է «Կովկասի երեխաները» գիրքը, 13 դեկտեմբերի, 2010թ.

- Համընդհանուր մարդկային արժեքները ներկայացնելու նպատակով ԲՀՀ-Հայաստանը հանդիպումներ է ունեցել 1500 դպրոցականների ու համայնքների անդամների հետ Հայաստանի 5 մարզերում:
- ԲՀՀ-Հայաստանն ընդհանուր հանրակրթական դպրոցներում ուսանելու հարցում աջակցել է 100 հաշմանդամ երեխաների. նոր գիտելիքներ ու հմտություններ են ապահովվել այդ երեխաների դաստիարակությամբ զբաղվող ուսուցիչների համար:
- ԲՀՀ-Հայաստանն աջակցել է կոմպլեքսային ծրագրերի ձևավորմանն ուղղված դասընթացների ծրագրերի մշակման ու ներդրման վերաբերյալ մեթոդական ձեռնարկի պատրաստմանն ու հրատարակմանն աշխատանքներին: Ձեռնարկն հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կողմից՝ որպես ուղեցույց բուհերի համար:
- Կրթության ազգային ինստիտուտը հաստատել է հետահայաց պլանավորումը որպես առարկայական ստանդարտների հասնելու գործիք, որոնք փորձնականորեն ներդրվում են ԲՀՀ-Հայաստանի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում՝ որպես ուսուցիչների վերապատրաստման կատարելագործված ուղի:

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

Սնունդ Գույն գյուղի մանկապարտեզի սաների համար

Տավուշի «Ոսկե ծղի» ՀԿ-ն օժանդակում է Ադրբեջանին սահմանակից Գույն գյուղի մանկապարտեզին, որը տեղական իշխանությունների հետ համատեղ ջանքերով հիմնել և շահագործում են համայնքի ակտիվիստները: Մանկապարտեզը երեխաներին սնունդ ապահովելու հարցում ֆինանսական դժվարություններ ունեն և աջակցության խնդրանքով դիմել էր տարբեր կազմակերպությունների, որպեսզի մինչև հունվար կարողանան երեխաների համար սնունդ գնել:

Համայնքին և մանկապարտեզին աջակցելու նպատակով ԲՀՀ-Հայաստանը երեխաների համար սնունդ ձեռք բերելու նպատակով ՀԿ-ին հատկացրեց 2040 ԱՄՆ դոլար:

2010թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում անցկացված այս նախագծի շնորհիվ սնունդ ապահովվեց մանկապարտեզի 2-6 տարեկան 30 սաների համար, ովքեր մանկապարտեզում ստանում են հիմնական նախադպրոցական ու մշակութային կրթություն: Նախագծին օժանդակում էին ողջ համայնքը և տեղական իշխանությունները: Մարզպետարանը խոստացել է հունվար ամսից սկսած աջակցել մանկապարտեզին:▪



Երեխաները ճաշում են Գույն գյուղի մանկապարտեզում, հոկտեմբեր, 2010թ.

Օժանդակություն Գավառի հատուկ դպրոցին

Գավառի թիվ 1 հատուկ դպրոց հաճախող ֆիզիկական և մտավոր թերզարգացում ունեցող ավելի քան 90 երեխաների ֆիզիկական վերականգնման ու արհեստագործական ուսուցման կազմակերպմանն օժանդակելու համար ԲՀՀ-Հայաստանը միացավ Հայ օգնության ֆոնդին (ՀՕՖ):

Հակաճգնաժամային հիմնադրամն հատկացրել է 25000 ԱՄՆ դոլար (ՀՕՖ-ի հատկացումը կազմում էր 45000 ԱՄՆ դոլար) դպրոցում կարի/ասեղնագործության, կոշիկարության ու փայտամշակման արհեստանոցները վերանորոգելու և կահավորելու, ինչպես նաև անհրաժեշտ պարագաներով ապահովելու համար: Նախագծի շրջանակում նախատեսվում է նաև ստեղծել վերականգնողական կենտրոն (վերանորոգում, կահավորում, թերապևտների ուսուցում)՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների ֆիզիկական ուսուցումը կազմակերպելու համար:

Նախագծի ավարտին (2011թ. հուլիսին) դպրոցի բոլոր աշակերտները վերանորոգված արհեստանոցների ու վերականգնողական կենտրոնի շնորհիվ հնարավորություն կունենան ձեռք բերել արհեստագործական գիտելիքներ և օգտվել ֆիզիկական վերականգնողական ծառայություններից, ձեռք բերել հմտություններ, որպեսզի դպրոցից հեռանալուց հետո կարողանան իրենց տեղը գտնել աշխատանքի շուկայում: Դպրոցի աշակերտներին մատուցվող ծառայություններից զատ վերականգնողական կենտրոնի դրները բաց կլինեն Գավառում ֆիզիկական վերականգնողական ծառայությունների կարիք ունեցող բոլոր երեխաների համար:▪

- Տնտեսական ճգնաժամից առավել խիստ տուժած մարդկանց բեռը մեղմելու համար Հակաճգնաժամային հիմնադրամը տարվա ընթացքում աջակցել է շուրջ 53000 շահառուների՝ հիմնականում ուշադրության կենտրոնում պահելով խոցելի և կարիքավոր խմբերի երեխաներին ու երիտասարդներին՝ հաշվի առնելով մանկական աղքատության խորացումը:

**Բաց հասարակության հիմնադրամների
Բարձրագույն կրթության աջակցման ծրագրի
Ակադեմիական կրթաթոշակներ ծրագիրը**

Հրավիրում է մասնակցելու Վերադարձող դասախոսների կրթաթոշակ ծրագրի շրջանակներում իրականացվող 2011/2012 ուս. տարվա մրցույթին: Մրցույթին կարող են մասնակցել երիտասարդ, շնորհալի երիտասարդներ, ովքեր արտասահմանում կրթություն ստանալուց հետո վերադարձել են հայրենիք և դասավանդում են, կամ պատրաստ են դասավանդելու ծրագրի գործընկեր ամբիոններից որևէ մեկում: Ծրագիրն աջակցում է այն երիտասարդներին, ովքեր մինչև 2011թ. արևմտյան բուհերից ստացել են գիտությունների թեկնածուի կամ մագիստրոսի որակավորման աստիճան հետևյալ բնագավառներում. մարդաբանություն, մշակութաբանություն, երկրագիտություն, տնտեսագիտություն, գենդերային ուսումնասիրություններ, պատմություն, մարդու իրավունքներ և հանրային իրավունք, միջազգային հարաբերություններ, լրագրություն, փիլիսոփայություն, քաղաքագիտություն, հոգեբանություն, հանրային կառավարում, հանրային առողջապահություն, շրջակա միջավայրի ուսումնասիրություններ, սոցիալական աշխատանք և սոցիոլոգիա: Ծրագրում ընդգրկված չեն բանասիրություն, գեղարվեստ, բիզնես բնագավառները:

Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկությունների, ինչպես նաև ներկա գործընկեր ամբիոնների ցանկին ծանոթանալու համար այցելեք ծրագրի վեբ կայքը՝ <http://www.soros.org/initiatives/hesp/focus/afp>:

Հայտերն ընդունվում են առցանց տարբերակով՝ <https://oas.soros.org/oas/>: Լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանումների համար դիմել՝ Սուսաննա Խաչատրյանին: Հասցե՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան գրասենյակ, Երևան 0002, Թումանյան 2-րդ փակուղի, տ.7/1, հեռ./ֆաքս՝ (374 10) 53 38 62; 53 67 58: Էլ. փոստ՝ susanna@osi.am:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 11 ապրիլի, 2011թ.:

**Համագործակցության հրավեր ամբիոններին
2011/2012 ուս. տարի**

Բաց հասարակության հիմնադրամների Բարձրագույն կրթության աջակցման ծրագրի Ակադեմիական կրթաթոշակներ ծրագիրը համալսարանների ամբիոններին հրավիրում է համագործակցելու: Գործընկեր ամբիոնը պետք է լինի որևէ պետական բուհի կազմում հետևյալ բնագավառներում. մարդաբանություն, մշակութաբանություն, երկրագիտություն, տնտեսագիտություն, գենդերային ուսումնասիրություններ, պատմություն, մարդու իրավունքներ և հանրային իրավունք, միջազգային հարաբերություններ, լրագրություն, փիլիսոփայություն, քաղաքագիտություն, հոգեբանություն, հանրային կառավարում, հանրային առողջապահություն, շրջակա միջավայրի ուսումնասիրություններ, սոցիալական աշխատանք և սոցիոլոգիա:

Լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանումների համար դիմել՝ Սուսաննա Խաչատրյանին: Հասցե՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան գրասենյակ, Երևան 0002, Թումանյան 2-րդ փակուղի, տ.7/1, հեռ./ֆաքս՝ (374 10) 53 38 62; 53 67 58: Էլ. փոստ՝ susanna@osi.am:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 11 ապրիլի, 2011թ.:

2012թ. Դասախոսների վերապատրաստման ծրագիր

Բաց հասարակության հիմնադրամները և Կրթաթոշակների ցանցային ծրագիրը հայտարարում են մրցույթ՝ 2012 թ. Դասախոսների վերապատրաստման ծրագրին մասնակցելու համար: Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ հավատարմագրված համալսարաններում մեկ լրիվ հաստիքով աշխատող դասախոսներին՝ ձեռք բերելու դասավանդման նորարական մեթոդներ և հմտություններ, մշակել նոր առարկայական ծրագրեր, բարձրացնել դասավանդվող ծրագրերի որակը, աջակցել ակադեմիական ցանցերի ստեղծմանն ու պահպանմանը: Մրցույթին կարող են դիմել հետևյալ առարկաներ դասավանդող դասախոսները. արվեստի պատմություն, մարդաբանություն, պատմություն, իրավաբանություն, փիլիսոփայություն, քաղաքագիտություն, հանրային առողջապահություն, կրոն, հասարակական աշխատանք, սոցիոլոգիա:

Ծրագրին դիմելու վերջնաժամկետն է՝ 2011 թ. փետրվարի 10-ը Դիմումի ձևը և լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել հետևյալ կայքէջերում՝ http://www.soros.org/initiatives/scholarship/focus_areas/facult_scholarships/guidelines/view; www.osi.am: Հարցերի և պարզաբանումների համար դիմել ԲՀՀ- Հայաստան գրասենյակ Աննա Գևորգյանին; հեռ. 010 533862; 010536758. Էլ. հասցե՝ anna@osi.am

Հասցե՝ Թումանյան փ. 2-րդ փակուղի, տուն 7/1
Երևան 0002, Հայաստան
Հեռ./Ֆաքս՝ +37410 533862; 536758
Էլ. փոստ՝ info@osi.am
Վեբ կայք՝ www.osi.am, www.partnership.am